

**ԳԼՈՒԽ, ԱՉՔ ԵՎ ՍԻՐՏ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ
ՍԻՎՎՈՐՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌԱՆՁԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ
ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Հիմնվելով իր դարավոր փորձի վրա՝ ժողովուրդը միշտ ձգտել է մեկնաբանել մարդու օրգանիզմում տեղի ունեցող երևույթները, կատարել բնախոսական մեկնաբանություններ: Օրինակ՝ նկատվել է, որ բարկանալիս կամ սուտ խոսելիս մարդը կարմրում է, ֆիզիկապես կամ հոգեպես ցնցվելիս՝ գունատվում, սաստիկ վախի զգացում ապրելիս սիրտն ուժգին բաբախում է և այլն: Այս դիտարկումները մի շարք դարձվածային միավորների ձևավորման հիմք են հանդիսացել՝ *սիրտը խփել, կաս-կարմիր կտրել, green around the gills* և այլն:

Սակայն երբեմն նման դիտարկումների հնարավորություն չի եղել: Այս դեպքում, նախապես իմանալով երևույթն ու նրա մեկնաբանությունը, ժողովուրդը լեզվական ընդհանրացում է կատարել և երևույթի բնախոսական նշանակության ըմբռնումից հասել նրա բարոյական նշանակության ըմբռնմանը: Սրա արդյունքում ձևավորվել են այլ դարձվածքներ՝ *սիրտը փորն ընկնել, ականջները սրել, գլխի ընկնել, աչքը ջուր կտրել, աչքից ընկնել, գլուխը դղում, ծեռը փակ, сердце разрывается, умная голова, one's head is in the air, look with a kindly eye* և այլն:

Անշուշտ, նման միավորները միանգամից չեն առաջացել: Տեղի է ունեցել բառերի և բառակապակցությունների վերաիմաստավորման աստիճանական գործընթաց, որի հետևանքով ձևավորվել են դրանք: Մարմնի մասերով կազմված (ինչպես և այլ կարգի) դարձվածքները, հիմնականում ձևավորվել են կայուն բառակապակցությունների փոխաբերացմամբ, փոխանվանացմամբ: Գործուն ռճական հնարներ են նաև համեմատությունները, չափազանցումները, շրջասույթները և այլն:

Վերաիմաստավորման հետևանքով ձևավորված դարձվածքները ի հայտ են գալիս զգայություններ, զգացմունքներ, հատկանիշներ և այլ երևույթներ արտահայտող իմաստային դաշտերում, ըստ իրենց բաղադրիչների արտահայտած ընդհանուր իմաստի, անկախ իրենց քերականական, կառուցվածքային, ռճական և այլ առանձնահատկություններից:

Սույն հոդվածի նպատակը հայերենի, ռուսերենի և անգլերենի «գլուխ» «սիրտ» և «աչք» բաղադրիչներով «սուտ, կեղծիք, խաբեություն» արտահայտող դարձվածային միավորների ուսումնասիրությունն է:

Թեև այս ոլորտում տեղ են գտել և՛ հայերեն ու ռուսերեն, և՛ անգլերեն դարձվածքներ, հարկ է նշել, որ հայերենի ոլորտն ամենածավալունն ու ամենաբազմազանն է՝ իր իմաստային, կառուցվածքային, ռճական և այլ առանձնահատկություններով:

Բերենք նման միավորներից հետևյալները.

1) Գլուխը (գլխին) կապել. — 1. Խաբելով վատը լավի փոխարեն անցկացնել: — Դու մեղավոր ես ընդով, որ մի մասը անհասկացող երեխի գլուխը կապել ես, բաշիբյարթմա ես արել (ՊՀ, 379):

Գլուխը յուղել (եղել) / յուղ/եղ քսել, — Քաղցր խոսքերով, շոյելով, հորդորելով համոզել, խաբել: «Ես նրա գլուխը տնպես եղիմ, վուր նա էլ եզուց ձեռը խփե մեջքիդ ու ասե. «Սուղոդեց, Սիմոն Յագորիչ, վսե խորոշո»»: (ՐԵ, III, 71): Դենց իմանա մեր Սարոն կիվկիվի եղ ունենա, ձեռաց մեր մովրովի գլուխը եղ քսեց, նրա կամին էլ առավ, նրա հրամանն էլ վրեն ավելացրեց (ՊՀ, 9):

Գլխե հանել (արևմտի.), — Մեկին համոզելով, խաբելով մոլորեցնել, ճիշտ ուղուց շեղել, գլխահան անել: Թառլան հարսիս գլխահան արեց (ԽՀ, 56):

Գլխից (գլխե) հանել, — Ուղիղ ճանապարհից հանել, շեղել, մոլորեցնել, զայթակղեցնել: Դարկավ մեզմե աղեկ գիտեն, թե որքան ամոթալի բան է իմ տարիքիս կին մը գլխե հանելը (ՊԵ, 613):

Գլխի տակ փափուկ/կակուղ բարձ/ բարձիկ դնել (մեկի), — Մեկին քաղցր, սնուտի խոստումներով միամտացնել, խաբել, հանգստացնել: Երևի իմացել է, որ ես տեղյակ եմ անցուդարձին, եկել է գլխիս տակ փափուկ բարձ դնելու (ՍԳԱ, 216):

Գլուխը / գլխին փաթաթել (փաթթել) (արևմտի.), — Գլուխը կապել, գլխին կապել: Կերևա քի ծիու հավասը առավ, աղբիկ մը փաթթեմք գլխուն (ԹՎԵ, I, 193): Իր կամքն ու երևակայությունը փաթաթում էր նրա գլխին (ՀԹ, (թարգմ.) II, 261):

Кружить голову, — Թմրեցնել, շշմեցնել: *Ведь он красавцем был, голову кружил женщинам* (ТЮ., 338): *Черные глаза бойкой красавицы вскружили и его голову* (ТНД., 30):

Turn sb's head (բառացի՝ գլուխը պտտել), — Պտտեցնել մեկի գլուխը: *Every day this week you've done something foolish. Has the heat turned your head?* (ՇԱԽ, 25):

Go to sb's head (բառացի՝ գնալ գլուխը), — Մեկի գլուխը պտտեցնել (զովեստներով, կոկեստությամբ): *Either his winnings or the way he had celebrated them had gone to his brother-in-law's head* (ԳՋԼ, 22):

2) Աչք (եր) ը կապել, — Խորամանկությամբ խաբել, մոլորեցնել, աչքին թոզ փչել, մեկի ուշադրությունը շեղել: Դաշիվում ավել վեր առնել, խաբել և կրպակից մի բան ընծայելով գյուղացու աչքերը կապել, աղայի առնտրական տան հին սովորությունն էր (ՐԵ, III, 224): — Թող այժմ մեզմից ընկնի ստի և փարիսեցիության քողը, որով օրորոցից արդեն կապում եմ մեր աչքերը (ՇԵ, 398): Աչքակապ գիշեր, Եկ, և պինդ կապիր գթոտ ցերեկի կաթոգին աչքը, Ետ առ, և ճղիր, և պատառոտիր այն մեծ մուրհակը, Որ պահում է ինձ այսպես գունաթափ (ՇՎԵ, թարգմ, 285):

Աչքին/ աչքերը/ աչքերին թոզ/ փոշի փչել, — Խորամանկությամբ խաբել, ապակողմնորոշել, չնչին բանով հրապուրել, շլացնել: Ծնողները վայնասուն, աղմուկ-աղաղակ կարածրացնեին, դես կընկնեին, դեն կընկնեին, իհարկե այդ ամենը միայն ցերեկը, որ մարդկանց աչքին թոզ փչեին (ԲԱ, 407): Եվ ինչպես էր կարողանում թոզ փչել մեր աչքերին այդ դարմանի տակով գնացող ջուրը, զգվելիության աստիճանի բծնող այդ մարդը (ԽՀ, 234):

Ալքը/ալքին/ալքերին թոզ/մոխիր/փոշի ածել/փչել, – Սիամտացնել, ճարպկությամբ խաբել: *Չեր հաճույքներին կարող եք առատ հագուրդ ընծայել, եվ այնուհանդերձ սառնություն թվալ, եվ փոշի փչել աշխարհի ալքին* (ԸԿԵ, քարգծ, 308):

Ալքերը/ ալքերին հող ու մոխիր փչել, – Տես՝ ալքերը թոզ փչել: **Յոդ փչել ալքին**: Առանց տոկոսի փող էիր պարտք տալիս, աղքատների ու անկարողների հարկերն էիր վճարում, ամենքի ալքերն էլ հող ու մոխիր էիր փչում ու ռամիկ ժողովրդի գովասանքն ու համակրությունը զրավում (ՊՅ, 261):

Ալքի (ց) սուրմա/ ծարիր/ սնգույր թոցնող, – 1 Շատ ճարպիկ՝ վարպետորդի: 2 Գող ավազակ: *Մեր զալում լակոտը մոր կոճակ կտրող է եղել, ալքի սուրմա թոցնող* (ՊՅ, 29):

Ալքի (ց) մազ (ը) / յուղը թոցնել/ թոցնող/ հանող, – Տես՝ ալքի (ց) սուրմա թոցնել/ թոցնող: – *Տեսնում ե՞ս, լակոտ, էսպես կլինի դոչադ տղան, մարդու ալքի միջից մազը կթոցնե* (ԲԵ, III, 245):

Ալքը խաբել, – 1 Տեսողական պատրանք ստեղծել, արտաքին ձևով՝ տեսքով, արտաքինով խաբել, հրապուրել: 2 Քիչ բանով գոհացնել: *Ունքերի նոսրությունը սրողված էր այնպիսի վարպետությամբ, որ ամենասրատես ալքը կարող էր խաբվել* (ԸԲ, 85): Սրդյոք հավիտենականի ա՛ջքն է ուզում խաբել, թե՛ ապագա սերունդների անեծքից է կամենում ազատվել (ՄԳ, 37):

Ալք (եր) (ը) փակել, – խաբել, մոլորության մեջ գցել, դիտավորյալ չտեսնելու տալ, չնկատել: *Այդ երեկո վճռականորեն փակեցի ալքերս զալիքի առաջ և որոշեցի չլսել այն ծայրը, որը նախագուշացնում էր վերահաս վշտի մասին* (ԲԸԶ, քարգծ, 283): – *Իզուր, դու նրանց ալքերը փակել չէիր կարող* (ՄԳ, 84):

Ալք գոցել, – Տես՝ ալք փակել: – *Սյ այս գիշեր մեր պակասություններում ալք գոցելու է*, Արիստղոմ աղա (ՊԵ, 248):

Пускать/ пустить пыль в глаза, – Կեղծ տպավորություն ստեղծել ինչ–որ մեկի մոտ, ինչ–որ բան ավելի լավ ներկայացնելով, քան իրականում կա, խաբել, մոլորեցնել: *Мы не то, что вы, не любим пыль в глаза пускать* (ԿԱԿ, 29):

Ослепить глаза, – Ալքերը շլացնել, խաբել, մոլորեցնել, ներկայանալ ավելին, քան կա: *Нужно только стряхнуть с него те блески, которыми он ослепляет глаза твоей возлюбленной, сделать его перед ней простым, обыкновенным человеком, а не героем* (ՏԻՕ, 136):

Pull/ draw the wool over sb's eyes (բառացի՝ մեկի ալքերի վրա բուրդ ձգել/ բաշել) – Մեկին մոլորեցնել, խաբել, ալքերին թոզ փչել: *«You can't pull the wool over my eyes: (CAH, 656). "Don't think ye can pull the wool over my eyes like that, and don't refer to my business in the same breath as your own gim-crack huckster's trade" (CAH, 263).*

3) **Սրտի հետ խաղալ / խաղ անել** (զգացմունքների հետ խաղալ, հաշվի չառնել մեկի տրամադրությունը):

Սիրտը գողանալ (անագնվորեն, խաբելով մեկի սիրուն տիրանալ): **Play upon sb's heart strings** (բառացի՝ մեկի սրտի լարերի վրա խաղալ–մեկի զգացմունքների հետ խաղալ):

Steal sb's heart (բառացի՝ գողանալ մեկի սիրտը – սիրահարեցնել իրեն՝ հաճախ խաբելով, անագնիվ ձևով):

Այս իմաստային ոլորտում տեղ են գտել նաև մի շարք այլ դարձվածքներ՝ **գլուխը շոյել** (համոզել, գովելով խաբել), **գլուխը պտտել** (հոգեկան աշխարհը վրդովել, զայթակղել), **գլուխը պտտեցնել** (1. (փխբ.) Զրապուրել, զայթակղել, խելքից հանել, 2. խաբել), **գլուխն արդուկել** (համոզելով խաբել), **գլուխը փչել** (զովեստներով, խոստումներով և այլն մեկին համոզել, համաձայնեցնել), **գլխին փափախ դնել** (խսկց.) (մեկին սուտ խոստումներով խաբել), **գլուխը եղջյուրներով զարդարել** (զրբ.) (ամուսնուն դավաճանել, խաբել, ամուսնական ուխտը դրժել), **գլխին կոտոշներ /եղջյուրներ տնկել** (1. ամուսնուն խաբել՝ դավաճանել, 2. խաբել, դավել), **գլուխը մածոնել** (բրբ.) (գլուխը յուղել, խաբել), **գլուխը ցխել** (բրբ.) (գլուխը կապել), **գլուխը պլլել** (արևմտ.) (գլուխը կապել), **գլուխը դլել** (բրբ.) (խաբելով համոզել), **գլուխը լուել/լուզել** (բրբ.) (գլուխը դլել), **գլուխը կլեկել** (բրբ.) (գլուխը դլել), **աչքին մշուշ բաց թողնել** (աչքին թոզ փչել), **աչքի (ց) սուրմա/ ծարիր թոցնել** (1 շատ ճարպիկ լինել, 2 վարպետորեն գողանալ), **աչքերը ներկել** (աչքերին թոզ փչել), **աչքը շպլեղ քաշել** (բրբ.) (վարպետությամբ խաբել), **մի աչքով լալ** (արտաքուստ վշտակցել՝ վիշտ-ցույց տալ, ծնականորեն ափսոսալ), **крутить / закрутить голову**, (1. զայթակղեցնել, սիրահարեցնել իրեն, 2. մոլորեցնել մեկին), **отводить / отвести глаза** (ուշադրությունը շեղել, խաբել, մոլորեցնել), **для отвода глаз** (մոլորեցնելու, խաբելու, ուշադրությունը շեղելու համար), **замазывать глаза** (գոհկ.) (խաբել, մոլորեցնել մեկին), **put horns on sth/sb's head** (բառացի՝ եղջյուրներ դնել մեկի գլխին, դավաճանել), **do sb in the eye** (բառացի՝ մեկի աչքի մեջ անել՝ խաբել մեկին), **throw dust in sb's eyes** (բառացի՝ աչքերին թոզ փչել՝ մեկին խաբել, մոլորեցնել), **cast / throw a mist before sb's eyes** (բառացի՝ մշուշ գցել մեկի աչքի առջև՝ խաբել, թոզ փչել աչքին) և այլն:

Բերված դարձվածային միավորները հիմնականում բայական երկանդամ, եռանդամ և բազմանդամ կառույցներ են: Հայերենում դրանցից երկուսը՝ **աչքի (ց) սուրմա թոցնող** և **աչքի (ց) մազ (ը) հանող/ թոցնող** կապակցությունները, թեև ածականական կառույցներ են, սակայն դրանք էլ կարող են վերածվել բայական կապակցությունների, եթե նրանցում ենթակայական դերբայները փոխարինվեն անորոշ դերբայով (սա երևում է նաև ոլորտում տեղ գտած՝ նշված միավորների բայական տարբերակներից): Ռուսերենում առկա է մակբայական մեկ՝ **для отвода глаз** կառույցը:

Նման կապակցություններում գործում են անվանական և բայական բերականական կարգեր՝ առկայացման, թվի, հոլովի, դեմքի, եղանակի, ժամանակի, սեռի, հաստատական-միտականի:

Այդ կարգերից մի բանիսն ունեն իմաստազատիչ դեր, այսինքն՝ եթե գործածվեն բերականական այլ կարգեր, ապա դրանք կկորցնեն իրենց դարձվածային իմաստը: Մյուս կարգերը զուրկ են այդպիսի դերից:

Դրանցում բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերություններն արտահայտվում են ըստ ուսումնասիրվող լեզուների տիպաբանական առանձնահատկությունների: Այսպես, եթե հայերենի և ռուսերենի դարձվածքներում բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերություններն արտահայտվում են հոլովական վերջավորություններով, ապա անգլերենում, կախ-

ված վերջինիս վերլուծական բնույթից, հիշյալ հարաբերություններն արտահայտվում են նախդիրներով:

Դիտարկված ոլորտում հանդիպում են մի շարք դարձվածային տարբերակներ: Օրինակ՝

Գլուխը յուղել/ եղել (ոճական),

Գլուխը/ գլխին կապել (քերականական),

Գլխին կոտոշներ/ եղջյուրներ տնկել (բառային, ոճական),

Աչքին/ աչքերին/ աչքերը թոզ փչել (քերականական),

Աչքից սուրմա/ ծարիր թոցնել (բառային),

Աչքի (ց) մազ (ը) / յուղը թոցնել/ թոցնող (բառային, քերականական),

Արտի հետ խաղալ / խաղ անել (բառային),

Крутить/закружить голову (քերականական),

Отводить/ отвести глаза (քերականական),

Пускать / пустить пыль в глаза (քերականական)

Pull/ draw the wool over sb's eyes (բառային),

Cast / throw a mist before sb's eyes (բառային) և այլն:

Չնայած բոլոր դարձվածքներն իրենց ընդհանուր իմաստով կարելի է հոմանիշներ համարել, սակայն նկատվում են մի քանի ավելի նեղ հոմանիշային շարքեր: Գնմտ.

Գլուխը կապել.– Գլուխը փաթաթել.

Գլուխը եղջյուրներով զարդարել.– Գլխին կոտոշներ տնկել:

Գլխին փափախ դնել.– Գլխի տակ փափուկ բարձ դնել.

Գլուխը մածոնել.– Գլուխը կլեկել – Գլուխը դլել – Գլուխը լուլզել:

Աչքը/ աչքին թոզ փչել/ ածել – Աչքից մազ (ը) / յուղը թոցնել – Աչքերը կապել, Աչքերը մշուշ բաց թողնել

Աչքերը կապել.– Աչքերը փակել

Աչքը խաբել.– Մի աչքով լալ

Отводить глаза — Ослеплять глаза — Для отвода глаз — Замазывать глаза

Turn sb's head, – Go to sb's head.

Throw dust in sb's eyes – Pull/ draw the wool over sb's eyes – Cast/ throw a mist before sb's eyes

Հակառակ դարձվածային միավորներ այս դաշտում, բնական է, չեն հանդիպում:

Բոլոր դարձվածքները դարձվածային սերտաճումներ և միասնություններ են՝ անփոփոխելի և անօտարելի բաղադրիչներով: Իմաստային առումով դարձվածքների առանցքային անդամները «գլուխ» «աչք» և «սիրտ» բաղադրիչներն են: Դրանց մեծ մասը մեմիմաստ է: Մեկից ավելի իմաստ ունեցող դարձվածքների դեպքում դիտարկվել են միայն այս դաշտին բնորոշ իմաստները:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, այս դաշտի դարձվածքները, բացի իրենց ընդհանուր իմաստից արտահայտում են նաև իմաստային մի շարք նրբերանգներ: Եթե «գլուխ» բառով դարձվածքներն արտահայտում են նաև համոզելով, հորդորելով խաբելու, դավաճանաբար, քաղցր խոսքերով

ու խոստումներով մեկին խաբելու, իսկ «սիրտ» բաղադրիչով դարձվածքները՝ մեկի զգացմունքների հետ խաղալու, մեկին՝ զայրակեղելով իր կողմը տրամադրելու» իմաստային նրբերանգները, ապա «աչք» բառը պարունակող դարձվածքներն արտահայտում են նաև մեկին խորամանկությամբ ու ապակողմնորոշելով, ճարակությամբ ու վարպետությամբ խաբելու, միամտացնելու, արտաքնապես կեղծելու և կեղծ տպավորություն ստեղծելու, ինչպես նաև ինքն իրեն կամ մեկին խաբելու, միտումնավոր կերպով փաստերը չտեսնելու, չնկատելու նրբիմաստները:

Դարձվածքների շարքում տեղ են գտել այնպիսիներ, որ ունեն իրենց համարժեքներն ուսումնասիրվող լեզուներից մեկում կամ երկուսում:

Չմտ. Գլուխը պտտել. – Кружить голову, – Go to one's head,

Գլուխը պտտեցնել. – Крутить голову, – Turn one's head,

Գլուխը եղջյուրներով զարդարել / Գլխին կոտոշներ / եղջյուրներ տնկել. – Put horns on sb's head/ Give horns to sb,

Աչքերը ներկել – Замазывать глаза,

Աչքերին մշուշ բաց թողնել – Cast/ throw mist before sb's eyes,

Աչք (եր) ին թոզ փչել – Пускать пыль в глаза – Throw dust in sb's eyes,

Սրտի հետ խաղալ, սրտի լարերի վրա խաղալ – Play upon sb's heart strings,

Սիրտը գողանալ – Steal sb's heart.

Կան նաև միայն այս կամ այն լեզվին, այսինքն՝ տվյալ ժողովրդի լեզվամտածողությանը բնորոշ դարձվածքներ՝ **աչքերը կապել, աչքից սուրմա թոցնել, աչքի մազը/ յուղը հանել, աչքը չպլեղ բաշել, մի աչքով լալ, для отвода глаз, do sb in the eye** և այլն:

Ենչու է, նկատվում է որոշ բաղադրիչների համարժեքություն, սակայն դրանք այլ իմաստ ունեն Օրինակ՝ **Գլուխը շոյել** դարձվածքը հայերենում ունի միայն «գովելով՝ խաբել» իմաստը, մինչդեռ մույն բաղադրիչները պարունակող ռուսերենի **Гладить по голове** դարձվածքն ունի երկու իմաստ՝ «գովել» և «պատծել»:

Բազմազան են նաև այս իմաստային դաշտի դարձվածքների ոճական առանձնահատկությունները: Դարձվածքներն օգտագործվում են գրքային ոճում (**գլուխը եղջյուրներով զարդարել**), բարբառներում (**գլուխը լուել, գլուխը դլել, գլուխը ցխել**), արևմտահայերեն տարբերակում (**գլուխը պլլել, գլուխը փաթթել**) և ընդհանրապես ժողովրդախոսակցական ոճում, (ռուսերենի **замазывать глаза** դարձվածքը գոեհկաբանություն է): Դրանք բավականին հաճախ գործածվում են նաև գեղարվեստական գրականության մեջ:

Այսպիսով, հայերենի, ռուսերենի և անգլերենի «գլուխ», «աչք» և «սիրտ» բաղադրիչներով «սուտ, կեղծիք, խաբեություն» արտահայտող դարձվածայի միավորների իմաստային դաշտի ուսումնասիրություն բացահայտում է նրանում տեղ գտած դարձվածային առանձնահատկությունների որոշ ընդհանրություններ ու տարբերություններ:

Չմարծեք դարձվածքները դիտարկելիս հարց է առաջանում, թե արդյո՞ք դրանք պատճենումներ են այս կամ այն լեզվից, թե՞ անկախաբար առաջացել են տարբեր լեզուներում: Դրանց ծագումնաբանական և ստուգաբանական

առանձնահատկությունները թողնելով մեր հետագա ուսումնասիրություններին՝ նշենք միայն, որ հիշյալ համարժեքները և այլ առանձնահատկությունների ընդհանրությունների առկայությունը վկայում են հիշյալ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների մասին: Իսկ այն բոլոր դարձվածքները, որ հատուկ են միայն մեկ լեզվին, ունեն ազգային բնույթ, պայմանավորված են լեզվամտածողության տարբերություններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. հ. 1-4, Ե., 1969-1980:
2. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:
3. Англо-русский фразеологический словарь (составил А. В. Кунин), т. 1-2, М., 1967.
4. Большой англо-русский словарь под редакцией И. Р. Гальперина, т. 1-2, М. 1977.
5. Фразеологический словарь русского языка, под ред. А. И. Молоткова, М., 1978.
6. Brewer's Dictionary of Phrase and Fable. London, 1956.
7. The Old English Dictionary, vol. 1-12, Oxford University Press, 1961.
8. Oxford Advanced Learner's Dictionary of Current English, by A. S. Hornby, Oxford University Press, 1980.
9. ԲԱ-ԲԵՍ Գ., Այրված վշտեր, Ե., 1967:
10. ԲԵՋ - Բրոնտե Շ., Ջեյն Էյր, Ե., 1988:
11. ԹՎԵ - Թորոպենց Վ., Երկեր 3 գրքով, գիրք I, Ե., 1988:
12. ԽԴ - Խանգաղյան Ս., Չողը, Ե., 1964:
13. ՅԹ - Յյուգո Վ., Թշվառներ, Ե., 1987:
14. ՍԳ - Սուրազան, Գևորգ Մարգարտունի, Ե., 1957:
15. ՍԳԱ - Սահարի Գ., Այրվող այգեստաններ, Ե., 1966:
16. ՇԵ - Շիրվանզադե Ալ., Երկերի լիակատար ժողովածու, հ. IV, Ե., 1930:
17. ՇՎԵ - Շեքսպիր Վ., Երկեր, Ե., 1991:
18. ՇՔ - Շիրվանզադե Ալ., Քաոս, Ե., 1968:
19. ՊԵ - Պարոնյան Հ., Երկեր, Ե., 1979:
20. ՊԶ - Պռոշյան Պ., Հացի խնդիր, Ե., 1968:
21. ԲԵ - Բաֆֆի, Երկերի ժողովածու 10 հատորով, հ I, III, IV, Ե., 1984:
22. ГИО - Гончаров И. А., Обыкновенная история, М., 1968.
23. ИД - Тургенев И. С., Дворянское гнездо, М., 1952.
24. ТИО - Тургенев И. С., Отцы и дети, М., 1983.
25. ЧАЧ - Чехов А. П., Человек в футляре, М., 1980.
26. САН - Cronin A. J., Hatter's Castle, М., 1963.
27. GJL - Galsworthy J., To Let, М., 1953.

А. КАЗАРЯН

СЕМАНТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ФРАЗЕОЛОГИЗМОВ С КОМПОНЕНТАМИ ГОЛОВА, ГЛАЗ, СЕРДЦЕ В АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИСКОМ

Одно и то же понятие может быть в одном случае выражено словом, в другом — фразеологической единицей, которая с эмоционально-выразительной точки зрения окрашивает данное понятие. Из этого следует, что фразеологизмы, как и слова, могут быть включены в семантические поля. В этом случае эти лингвистические единицы включаются в вышеуказанные поля по общему смыслу их компонентов независимо от их грамматических, структурных, стилистических и других особенностей.

Целью данной статьи является изучение, анализ и сопоставление армянских, русских и английских фразеологизмов с компонентами "голова", "глаз" и "сердце", выражающих ложь и обман.

Изучение данных фразеологизмов выявляет некоторые сходства и различия как между семантическими, так и между другими особенностями фразеологических единиц указанных языков, что свидетельствует об общности и различиях, существующих в языковом мышлении народов, носящих эти языки.

H. GHAZARYAN

THE SEMANTIC FIELD OF PHRASEOLOGICAL UNITS WITH THE COMPONENTS HEAD, EYE AND HEART IN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH

One and the same idea can be expressed by a word, in one case, and by a phraseological unit in another. This makes the given idea more vivid from the emotional and expressive point of view. Hence, like words, phraseological units can be included in semantic fields. In this case, these linguistic units are included in the mentioned fields according to the general meaning of their components independent of their grammatical, structural, stylistic and other characteristics.

The goal of this article is to study, analyze and compare the Armenian, Russian and English phraseological units with the components "head", "eye" and "heart" expressing lie, deceit and fraud.

The investigation of the mentioned phraseological units reveals some similarities and differences between both semantic and other characteristics of the phraseological units of the languages studied. These similarities speak of the common features of the linguistic thinking of the peoples speaking those languages, on the one hand, while the differences show the peculiarities of that same linguistic thinking.